ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐ



ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արաբական Միացյալ Էմիրություններում առկա են **հիմնական մաքսային գոտիներ** և **ազատ առևտրի գոտիներ**՝ կախված այն հանգամանքից, թե որ ուղղությամբ են ապրանքներն ուղղվում՝ ելնելով ստորև ներկայացված տարբերակիչ գործոններից.

! Համաձայն Պարսից ծոցի համագործակցության գլխավոր քարտուղարության Ընդհանուր մաքսային օրենքի՝ Արաբական Միացյալ Էմիրությունների մաքսային գոտիների համար նախատեսված ապրանքները ենթակա են պարտադիր մաքսային գործառնությունների, իսկ ազատ առևտրի գոտիների համար նախատեսված ապրանքները ազատվում են մաքսային պարտավորությունների կատարումից: Արաբական Միացյալ Էմիրություններում գործում են 37 ազատ առևտրի գոտիներ, որոնց վերաբերյալ տեղեկատվություն կարելի է ստանալ՝ անցնելով հետևյալ հղումով՝

http://www.uaefreezones.me/

[Արաբական Միացյալ Էմիրությունների ազատ առևտրի գոտիներ]

! Ազատ առևտրի գոտիներ ներմուծվող ապրանքները ազատվում են մաքսատուրքի գանձումից: Արաբական Միացյալ Էմիրությունների ազատ առևտրի գոտիներից, Պարսից ծոցի համագործակցության խորհրդի մաքսային գոտիներից դուրս, երրորդ երկրներ վերաարտահանվող ապրանքները նույնպես ազատվում են ցանկացած տեսակի մաքսատուրքի գանձումից: Այնուամենայնիվ, այն ապրանքները, որոնք Արաբական Միացյալ Էմիրություններ են ներկրվում հետագայում ամբողջությամբ կամ մասամբ այլ երկրներ վերաարտահանվելու նպատակով, մաքսային վճարումների փոխարեն ապահովվում են ապրանքների հանդեպ կիրառվող մաքսային սակագնին համարժեք ավանդով կամ երաշխիքով: Այս ընթացակարգի համար կիրառվում է «Ներմուծում արտահանման համար» մաքսային հայտարարագրի տեսակը: Ներկայումս այս հայտարարագիրը կիրառվում է 20000 **ԱՄԷ դիրհամից** բարձր արժեք ունեցող ապրանքների համար՝ բացառությամբ տրանսպորտային միջոցների:

❗ Հիմնական մաքսային գոտիներ կամ ազատ առևտրի գոտիներ ներմուծվող Արաբական Միացյալ Էմիրություններում վաճառքի ենթակա և (կամ) Պարսից ծոցի համագործակցության խորհրդի երկրներ վերաարտահանվող ապրանքների նկատմամբ կիրառվում է ներմուծման միասնական մաքսային սակագինը՝ համաձայն Պարսից ծոցի համագործակցության գլխավոր քարտուղարության Ընդհանուր մաքսային օրենքի, որով սահմանվում է Արաբական Միացյալ Էմիրություններ ներմուծման կանոնակարգը: Հետագայում՝ ապրանքները կարող են տեղափոխվել Պարսից ծոցի համագործակցության խորհրդի մաքսային գրասենյակներ՝ թույլատրելով ապրանքների անցումը մեկ անդամ պետությունից մյուսը: Վերոնշյալ ապրանքների ներքին շրջանառության նպատակով պետք է լրացվի արտահանման վիճակագրական հայտարարագիր, որի կրկնօրինակը պետք է ներկայացվի ներմուծող երկրի մաքսային գրասենյակ «Makasa» **կնիքով** (մարման մեխանիզմով)՝ նշանակման վայրում մաքսատուրքի կրկնակի վճարումներից խուսափելու համար: Նման գործարքի իրականացման համար լրացվում է «Ներմուծում Պարսից ծոցի համագործակցության խորհրդի անդամ պետությունից» հայտարարագրի տեսակը:

❗ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱԿԱԳՆԵՐ

Որպես Պարսից ծոցի համագործակցության խորհրդի անդամ՝ Արաբական Միացյալ Էմիրությունների կողմից կիրառվում է Պարսից ծոցի համագործակցության խորհրդի միասնական մաքսային սակագինը, որը բաղկացած է չորս տեսակի ադվալորային մաքսատուրքի դրույքաչափերից՝ 0%, 5%, որը հիմնականում կիրառվող դրույքաչափն է, 50% և 100%, որոնք կիրառվում են համապատասխանաբար ալկոհոլի և ծխախոտի նկատմամբ: Կիրառվող մաքսատուրքերի դրույքաչափերի մոտ 97%-ը ադվալորային են: Մաքսատուրքերը հիմնվում են ներմուծման CIF (արժեքը, ապահովագրումն ու փոխադրումը) արժեքի վրա: Հետևաբար, ներմուծման մաքսատուրքը և հարկերը հաշվարկվում են փոխադրման վերջնական արժեքի նկատմամբ, որն ընդգրկում է ներմուծվող ապրանքների արժեքը, բեռնափոխադրման և

ապահովագրության ծախսերը: Արաբական Միացյալ Էմիրություններ փոխադրվող ապրանքների համար այլ լրացուցիչ հարկեր չեն կիրառվում:

Արդյունաբերական ապրանքների մեծ մասի նկատմամբ կիրառվում է ներմուծման մաքսատուրքի 5% դրույքաչափ: Իսկ այն հումքային արտադրանքը, որը օգտագործվում է լիցենզավորված արդյունաբերական նախագծեր իրականացնելու համար, Արաբական Միացյալ Էմիրություններ մուտք է գործում անմաքս: Արաբական Միացյալ Էմիրություններում արտահանման հարկեր, տուրքեր և վճարներ չեն կիրառվում: Երկակի օգտագործման ապրանքների արտահանումը իրականացվում է թույլտվության (լիցենզիայի) առկայության դեպքում: Առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար անցեք հետևյալ հղումներով՝

https://www.dubaicustoms.gov.ae/en/Publications/Documents/GCCCommonCustomsLawEnglish.pdf

[Պարսից ծոցի համագործակցության խորհրդի քարտուղարության ընդհանուր մաքսային օրենքը]

https://www.fca.gov.ae/en/HomeRightMenu/Pages/hscodeDefinition.aspx?SelectedTab=5

[Պարսից ծոցի համագործակցության խորհրդի անդամ պետությունների միասնական մաքսային սակագինը]

ՀԱՏՈՒԿ ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ



Լրացուցիչ կարգավորումներ են կիրառվում հետևյալ ապրանքների նկատմամբ.

- Սննդամթերքը, խմիչքները և խնամքի միջոցները նախապես փորձաքննության պետք է ենթարկվեն ***Քաղաքապետարանի սննդի վերահսկողության վարչության*** կողմից: Օգտագործման մասին թույլտվությունը պետք է կցված կլինի մաքսային ձևակերպումների փաստաթղթերին: Պարենային բոլոր տեսակի ապրանքների համար արտադրության և ժամկետի սպառման ամսաթվերը պետք

է նշված լինեն փաթեթավորման և արկղի վրա **անգլերեն** և **արաբերեն** լեզուներով:

- Բոլոր դեղագործական միջոցները և դեղերը պետք է ունենան Արաբական Միացյալ Էմիրությունների **Առողջապահության նախարարության** կողմից տրված ներմուծման թույլտվություն: Արաբական Միացյալ Էմիրություններ ներմուծելիս այն պետք է կցված լինի ֆրախտին:
- Կենդանի կենդանիների համար ներմուծողը պետք է ստանա նախնական գրավոր համաձայնություն Արաբական Միացյալ Էմիությունների **Բնապահպանության նախարարության** կողմից:
- Բոլոր անլար կապի սարքավորումների, բացառությամբ բջջային հեռախոսների, ներմուծումը պահանջում է **Հեռահաղորդակցությունը կարգավորող պետական մարմնի**, իսկ որոշ էմիրություններում՝ նաև **Ոստիկանության** կողմից տրված թույլտվությունը:

Արգելված կամ սահմանափակման ենթակա ապրանքների մասին առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար այցելեք DubaiTrade կայքը՝ հետևյալ հղումով.

http://www.dubaitrade.ae/toolbox/download/category/53-business-environment-articles?download=459:customs-laws-and-regulations

[Արաբական Միացյալ Էմիրություններ ներմուծման դեպքում սահմանափակման կամ արգելքի ենթակա ապրանքների ցանկը]

ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ՎԵՐԱԴԱՍ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

https://www.fca.gov.ae/en/Home/Pages/default.aspx

[Արաբական Միացյալ Էմիրությունների դաշնային մաքսային ծառայություն]

https://www.dubaicustoms.gov.ae/en/Pages/default.aspx

[Դուբայի Էմիրության մաքսային ծառայություն]

http://www.sharjahcustoms.gov.ae

[Շարժայի Էմիրության մաքսային ծառայություն]

http://www.rakcustoms.rak.ae/en/Pages/default.aspx

[Ռաս-Ալ-Խայմայի Էմիրության մաքսային ծառայություն]

ԱՅԼ ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ՝

http://www.gcc-sg.org/en-us/Pages/default.aspx

[Պարսից ծոցի համագործակցության խորհրդի գլխավոր քարտուղարություն]

https://www.abudhabi.ae/portal/public/en/homepage

[Աբու Դաբի Էմիրության թվային կառավարություն]

http://agriexchange.apeda.gov.in/IR_Standards/Import_Regulation/FoodandAgriculturalImportRegulationsandStandardsNarrativeDubaiUnitedArabEmirates5122014.pdf

[Պարենային և գյուղատնտեսական ներմուծման կանոնակարգերը և սպանդարտները]

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԵՎՏՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության առևտրաշրջանառությունը Արաբական Միացյալ Էմիրությունների հետ 2016 թվականի հունվար-դեկտեմբերին կազմել է 119,3 մլն. ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 2,3 անգամ (2015 թվականի հունվար-դեկտեմբերին կազմել է 52,7 մլն.ԱՄՆ դոլար): 2016 թվականի հունվար-դեկտեմբերին արտահանումը Հայաստանի Հանրապետությունից Արաբական Միացյալ Էմիրություններ 63,8մլն ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 7,0 անգամ (2015 թվականի հունվար-դեկտեմբերին կազմել է 9,1 մլն. ԱՄՆ դոլար): 2016 թվականի հունվար-դեկտեմբերին Արաբական Միացյալ Էմիրություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծումը, ըստ ծագման երկրի հատկանիշի, կազմել է 55,5 մլն.ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 27,4%-ով (2015 թվականի հունվար- դեկտեմբերին

կազմել է 43,6 մլն.ԱՄՆ դոլար), ըստ առևտուր անող երկրի հատկանիշի ներմուծումը կազմել է 190,7 մլն.ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 10.6%-ով (2015 թվականի հունվար-դեկտեմբերին կազմել է 172,3 մլն.ԱՄՆ դոլար):

2016 թվականին Հայաստանի Հանրապետությունից ԱՄԷ արտահանված առավելագույն մաքսային արժեք ունեցող ապրանքներն են.

- **Սիգար, սիգարիլլա, սիգարետ**,
- **Ադամանդ**,
- **Ոսկերչական իրեր**,
- **Բանջարեղեն թարմ կամ պաղեցրած**,
- **Թանկարժեք (ոչ ադամանդ) և կիսաթանկարժեք քարեր,**
- **Այլ կերպ պահածոյացված միրգ, ընկուզեղեն, հատապտուղ:**

2016 թվականին Արաբական Միացյալ Էմիրություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծված առավելագույն մաքսային արժեք ունեցող ապրանքներն են.

- **Ադամանդ**,
- **Ոսկի (ներառյալ պլատինի գալվանական պատվածքով); փոշի,**
- **Սառնարան, սառցարան եւ այլ պաղեցնող սարքավորում էլեկտրական կամ այլ տեսակի,**
- **Շաքար**,
- **Թանկարժեք (ոչ ադամանդ) եւ կիսաթանկարժեք քարեր,**
- **Թեյ** ,
- **Լվացքի մեքենա:**